## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 1.3

## ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/30-ՀՆՆ1 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան** **6 օգոստոսի 2026թ.**

2026թ. օգոստոսի 6-ին՝ ժամը 11:00-ին, ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 104 հասցեում գտնվող ՀՀ ազգային անվտանգության ծառայության շենքում տեղի ունեցավ հատուկ նպատակային այլ նյութերի ձեռքբերման թիվ ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/30-ՀՆՆ1 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Վ. Փարսյանը՝ | ՀՀ ԱԱԾ ՏնտՎ պետը, |
| Դ. Սարգսյանը՝ | ՀՀ ԱԱԾ ՏնտՎ աշխատակիցը, |
| Ս. Մխիթարյանը՝ | ՀՀ ԱԱԾ ՏնտՎ աշխատակիցը: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Վ. Փարսյանը, որին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Վ. Վարդանյանը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր երեք անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված Հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջը համարվում է պահպանված, իսկ նիստն իրավազոր, ինչով պայմանավորված Հանձնաժողովի նիստը հայտարարվեց բացված:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Ընթացակարգի շրջանակում ներկայացված հարցման և տրամադրված պարզաբանման մասին:
2. Ընթացակարգի հրավերում փոփոխություն կատարելու և փոփոխված հայտարարության և հրավերի տեքստերը հաստատելու մասին:
3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

## 1. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՐՑՄԱՆ և ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով Ընթացակարգի շրջանակում ստացված հարցման բովանդակության վերաբերյալ տեղեկատվություն, մասանորապես, տեղեկացվեց, որ 04.08.2026թ-ին ժամը 17:22:28-ին և 05.08.2026թ-ին ժամը 17:26:06-ին Մասնակիցների կողմից ստացվել են հարցումներ (կցվում է) հետևյալ բովանդակությամբ՝

Հարցում 1. «Հարգելի Պատվիրատու, Խնդրում եմ պարզաբանել ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/30-ՀՆՆ1 ծածկագրով մրցույթի հետևյալ չափաբաժինները. 1.34,35,39 և 40-րդ չափաբաժիններում նշված չէ Ջրի տարրայի հումքի տեսակը,այսինքն պետք է լինի առաջնային հումքով՞,խմելու ջրի համար է օգտագործվելու,թե ոչ՞, 2. 38-րդ չափաբաժնում Հակահրդեհային արկղի պահանջվող չափերն են՝ 540x650x230, իսկ քաշը 12.4 կգ,նշված պարամետրերի մեջ կա անհամապատասխանություն, քանի որ նշված չափերով արկղերի քաշը տատանվում է 6.5-8.8 կգ-ի սահմաններում: խնդրում եմ պարզաբամել վերը նշվածները:»:

Հարցում 2. «Խնդրում եմ հրավերի 34,35,39,40 չափաբաժինների՝ ջրի տարրաների հետ կապված պարզաբանում անեք, արդյոք նշված ջրի տարաները պետք է լինեն երկշերտ և արտադրված լինեն առաջնային պոլիէթիլենային հումքից այսինքն սննդային են թե՞ ոչ: Ինչպես նաև կխնդրեմ պարզաբանեք տարրաների նշված չափսերը կարող են ունենալ որոշակի շեղում Ձեր կողմից ներկայացված չափսերից:»:

06.08.2026թ-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Պատասխանել հարցումներ ներկայացրած Մասնակիցներին հետևյալ բովանդակությամբ՝ «Հարգելի մասնակից, 34, 35, 38, 39 և 40-րդ չափաբաժինների մասով Ընթացակարգի հրավերով սահմանված բնութագրերում տեղի է ունեցել վրիպակ, որի մասով հրավերում կատարվում է համապատասխան փոփոխություն»:
2. Հաստատել հրավերի պարզաբանման մասին հայտարարության տեքստը, համաձայն սույն արձանագրության Հավելված 1-ի:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀՐԱՎԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ և ՓՈՓՈԽՎԱԾ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ և ՀՐԱՎԵՐԻ ՏԵՔՍՏԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով գեներացված Ընթացակարգի փոփոխված հայտարարության, ինչպես նաև փոփոխված հրավերի տեքստերի նախագծերը.

06.08.2026թ-ին Հանձնաժողովը որոշեց՝

1. Հաստատել էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով գեներացված Ընթացակարգի փոփոխված հայտարարության, ինչպես նաև փոփոխված հրավերի տեքստերի նախագծերը:

2. Հաստատել Ընթացակարգի իրավերում փոփոխության կատարման մասին հայտարարության տեքստը, համաձայն սույն արձանագրության Հավելված 2-ի:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՋՈՐԴ ՆԻՍՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՕՐԸ, ԺԱՄԸ ԵՎ ՎԱՅՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

06.08.2026թ-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը նշանակել համապատասխանաբար Ընթացակարգի փոփոխված իրավերով և հայտարարությամբ սահմանված օրը և ժամին՝ ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 104 հասցեում գտնվող ՀՀ ազգային անվտանգության ծառայության շենքում:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Վ. Ֆարսյան ____________

*Հանձնաժողովի անդամ՝*

Դ. Սարգսյան ____________

Ս. Մխիթարյան ____________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Վ. Վարդանյան ____________